

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂՈՅՆԱՆ.

ԱՐՁԱԼՈՅՍԻ ==  
== ՂՕՂԱՆՋՆԵՐ

891.99  
4-88

ԲՆՆԱՅՆՆԵՐԻ ԲԻՐՆԵՐ  
և ԿՐԿ.

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ.

„ԱՐՇԱԼՈՅՍԻ ❷  
❸ ՂՕՂԱՆՋՆԵՐ“

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ա. պրակ.

1907.

ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎՐԷ ԿԻՆՉԵԱՆԻ  
Նոր-Նախիջևան.



Типографія С. Я. АВАКОВА  
Нахичевань на-Дону.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՂՕՂԱՆՋՆԵՐԸ.

Ղօղանջում են զանգակները... ղօղանջում են ամեն օր,  
Տառապանքի կսկիծներից երգեր հիւսում ահաւոր—  
Տանջուած երկրի ցաւոտ կրծքից ըմբոստ կռուի կոչն  
ուժգին

Տարածւում է ամեն խաւում ահեղ թափով՝ ամենքին:

Դէհ, վեր կացէք— ում սրտում դեռ մարդկային  
կոչման արժան գէթ մի նշոյլ սնամեկին  
Թրթռում է տանջանքների բովի մէջ,  
Վշտից, ցաւից, գերութիւնից դեռ անշէջ:

Դէհ, վեր կացէք— ում սրտում դեռ բռնութեան  
Աւրոզ ձեռքից իզէալներ կը մխան—  
Ով յոգնել է կորաքամակ՝ ոյժի գէմ  
Միշտ սողալուց, թմրած հոգով և անզէն:

Դէհ, վեր կացէք ու միացէք անխափան  
Ըմբոստ հոգիք՝ զրկանքներից ցիր ու ցան,  
Ով որ լինիք, ուր որ լինիք՝ միասին  
Ողջունելու ազատութեան սուրբ լոյսին....»

Ղօղանջում են զանգակները... ղօղանջում են ամեն օր  
Տառապանքի կսկիծներից երգեր հիւսում ահաւոր—  
Տանջուած երկրի ցաւոտ կրծքից ըմբոստ կռուի կոչն  
ուժգին  
Տարածւում է ամեն խաւում ահեղ թափով՝ ամենքին...

## ՅԱՌԱՋ ԱՆՎԵՀԵՐ.

Յառանջ անվեհեր, յառանջ միաբան,  
Արթնացած կեանքի ծագում է արվին.  
Շողերը պայծառ, լուսով անխափան  
Յոյս է ներշնչում կռուի տագնապին:

Եւ հետզհետէ բռնակալ ոյժի  
Շիրիմն է փորւում խո՞ր, անգնդային,  
Ոճրագործութեան սև մահագոյժի  
Շեփորն է հնչում ձայնով երկնային:

Եւ օրըստօրէ շարքերը կռուող  
Աճում են ըմբոստ անձնուբայնորից,  
Անյայտութեան մէջ հոգիք դեզերող  
«Կրէժ» են կանչում խոնաւ հիւղերից:

Եւ գիտակցութեան շունչն ամեն սրտում  
Մըրիկ է հանել արդար պահանջի, —  
Ով բնկերական կռիւն է մտնում,  
Նա ոչ մի ոյժից յետ չի նահանջի...

Յառանջ անվեհեր, յառանջ մինչև վերջ.  
Սուրբ նպատակին միշտ հաւատարիմ—  
Մահըն անմահ է արդար կռուի մէջ  
Եւ ուխտատեղի՝ մարտիկի շիրիմ...

Ա՛յն լո՛յս օրերի—վառ գարնան համար  
Ձեզ՝ սև՝ շղթաներ, իմ կրծքի վրայ  
Կբուժեմ եմ հլու, տանջուժեմ անզաղար՝  
Գիշերը՝ անբուն, ցերեկն՝ անզգայ:

Ա՛յն լո՛յս օրերի—սուրբ ազատութեան  
Երկունքի ցաւն է իմ հոգին կիզում,  
Կեզերուած կեանքիս անվերջ դառնութեան  
Միայն յոյսերով վերջ եմ երազում:

Ա՛խ, սև՝ շղթաներ, անարգ հանգոյցներ,  
Դուք բիրտ կարգերի ե՛ ոյժ ե՛ տաղանդ—  
Իմ կրակ սրտիս իղձըն անձնուէր  
Մոլի բռնութեան զրեղ էք պատանդ:

Ա՛խ սև՝ շղթաներ, ժանգոտ օղակներ,  
Դէհ զնզնագացէք հիմնը յաղթական՝  
Ա՛յն լո՛յս օրերի հիմնըն անվեհեր  
Եւ ձեր գարշելի սղբերգը մահուան...



ՄԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.

Ո՛չ խաչ, մահարձանն .. անշուք հողակոյս  
Ամայի դաշտում լսւո առանձնացած  
Ընկած է անփոյթ:

Անթիւ վէրքերով վիրաւոր կրծքում  
Վեհ գաղափարի անյաղթ փոթորիկ  
Էլ չի ազմկում:

Յոգնած գլուխը մայր հողի կրծքին՝  
Յաւոտ աշխարհի լացը չի լսում—  
Քնած է հողին:

Ասողերը—կանթեղ, ցուքով են հրավառ  
Շիրմին լոյս տալիս. բոյսը բուրմունքով—  
Խնկարկող բուրվառ:

Քամին թեկրով զզւում է, դողում—  
Իր մահասարսուռ ձայնով վշտացած  
«Ողորմի» ասում:

Ո՛չ խաչ, մահարձան... կեանքի խաչը նա  
Այնպէս անվեհեր, ամենքի համար  
Տարաւ Գողգոթա...

ԲԼԲՈՒԼԻՆ.

Արի, բլբուլ, մէկ տեղ նստենք,  
Չէն-ձէնի տանք ու երգենք.  
Էս օրուանից դառնանք աղբէր,  
Իրար խառնենք մեր ցաւեր:

Անցան գարուն, աշուն կուգայ,  
Շատ հեռու չէ և ձմեռ,  
Լաց, աղբէր ջան, էլ վարդ չկայ,  
Թո՛ւփը մնաց կիսամեռ:

Երգենք, աղբէր, ցաւը երգենք՝  
Դու քո մեռած ալ վարդի,  
Երգենք, աղբէր, ցաւը երգենք—  
Ես՝ իմ աւեր վաթանի...

Անցան գարուն, արնճա գարուն.  
Մօտ է աշուն, ցուրտ ձմեռ,  
Ա՛խ, աղբէրս մնաց անտուն,  
Գոյրս քաղցից կիսամեռ...

Արի, բլբուլ, ցաւը երգենք  
Վարդի, աւեր վաթանի,  
Արի, աղբէր, իրար խառնենք  
Մամճու ցաւը մեր սրտի...



ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ.

Այդ մենք ենք գալիս—

Մաշուած բաճկոններ, իւղոտ ու մրոտ,  
Տրորուած գտակ, աղտոտ մազերով,

Մեծ մասամբ դեղնած, գծուծ և բոկոտ,  
Երբեմն դժգոյն, երբեմն անխոսով,

Երբեմն քաղցի, լուռ տառապանքի

Սև կնճիռների անջինջ կնիքով,

Երբեմն ըմբոստ արհամարանքի

Անզուսպ զայրոյթի վրէժի թոյնով.

Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցաւից,

Լոյսի, դարմ օղի տենչանք դէմքերիս

Ու մարդավայել ապրելու յոյսից

Դեռ խո՛ր վէրքերի կսկիծ սրտերիս—

Այդ մենք ենք գալիս ..

Մենք, բանուորներս՝ տուգած փորերի,

Շերտաւոր ճարպի, ոսկու դէղերի—

Անվարձ մշակներ...

Մենք, բանուորներս՝ վշտի, արցունքի,

Կիսաքաղց կեանքի, բանտի, աքսորի—

Անբաժան ընկեր...

Մենք, բանուորներս՝ ապրելու ահից՝

Կեանքի շուկայում ստոր վաճառքից—

Էժան ծախուածներ...

Ո՛ր մեծ տղրուկներ, մարդկային կեանքի

Ստեղծագործութեան անարգ խեղդիչներ.

Դո՛ւք՝ փարթամութեան, անառակ տենչի

Քնած խիղճերով թմրած խլուրդներ.

Դուք՝ ամօթապարտ գերեզման փորող  
Գարշ դահիճներդ սուրբ ազատութեան.  
Ձեր նմանների արիւնը լափող,  
Բողբոջ յոյսերի դեեր հոգեհան,  
Գուցէ չե՞նք շոյում մեր տանջուած գէմքով  
Ձեր նուրբ ջղերը—հոգով քաղցածներ,  
Դուք՝ կուշտ մարմիններ:

Ձէ՞ որ մեր արեան մի-մի կաթիլով,  
Ազի ու լեզի թափած քրտնքի,  
Դառն արցունքների անվերջ հեղեղով,  
Մեր բազուկների հուժկու, ժրաջան,  
Կոր թիկունքների, հոգու տազնապով,  
Մեր գլխին պատրաստ ամեն մի վայրկեան  
Չարաբաստ մահուան անլուր սարսափով

Մնունդ էք առնում

Ապրում, իւր կապում...

Եւ վաստակներիս չնչին փշրանքներ  
Դժգոհ շարտում քաղցած ամբոխիս.  
Կասեա մարդկութեան մենք խորթ գաւակներ—  
Դուք վայելչութեան, անարգար կեանքի  
Ընտիր ըմբիշտներ...

Հա՛, մենք ենք գալիս—

Դարեոր վշտի զրկանքի բովից,  
Հալածանքների; պարշ ստրկութեան  
Մոռացուած խաւից—

Կրծքով փշրելու փառքը տիրողին,—  
Գահը բռնութեան — ստրուկի շղթան,—  
Նոր ուզի հարթել մեր նմաններին,  
Արժանի կոչման—հաւասարութեան՝

Այդպէս ենք գալիս...

Ինչի՞ն է պէտք ծաղիկ, գարուն,  
Կամ արշալոյս, վերջալոյս...

Ինչի՞ն է պէտք—ով է սիրուն,  
Ով այլանգակ, խեղճ, անյոյս:

Ինչի՞ն է պէտք—ով չի լսում՝  
Թշնամի է իմ հրդին.

Ինչի՞ն է պէտք—ով արտասուում՝  
Ըմբռնում է իմ հոգին:

Ես ինձ համար ունեմ գարուն,

Ո՛չ ոք նրան չի տեսնի

Ես ինձ համար ունեմ սիրուն,

Ո՛չ ոք նրան չի հասնի:

Անլոյս աչքիս՝ լոյսը կրճքիս—

Ինձ արշալոյս, վերջալոյս.

Եւ հարադատ մըմունջ-հրդիս՝

Ե՛ս ունկընդիր մինչև լոյս...

**ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ.**

Ա. Խ.-ի յիշատակին.

Էն սև զիշերում, դուման դարդերի  
Փրփրած ծովում ընկաք ու մեռաք,  
Ա՛յ, իմ ազիզներ, դադուած սրտերի,  
Եաման օրերի դուք յոյս երկնառաք:

Ծփուն ալիքներ փրփուր թևերով  
Ինչպէ՞ս սիրտ արին ու ձեզ կուլ տուին,  
Ա՛յ, իմ ազիզներ, որ էն մենծ ցաւով  
Դուք ճամբայ ընկաք մուրազի ափին:

Էն վառ փարոսը, որ դուք վառեցիք  
Դարդերի ծովի մութ դէմքի վրայ,  
Լո՛յս է տարածում... Անցնում են մարդիկ՝  
Ուր առաջինը դուք բացիք ճամբայ:

Ես ձեզի չեմ լայ... դուշմանը թո՛ղ լայ —  
Էն դուլ օրերի գետնաքարշ ընկեր.  
Ես էլ, ազիզներ, ձեր ճամբէն ընկայ,  
Թողած լոյսերիդ շողերն հմ գրկեր...

Իմ մոմուռ, միշտ անլուռ ցաւերգով  
Ա՛յ, անգին, քո հոգին ձանձրացա՛ւ,  
Որ անդարդ ու հանդարտ եղերքով  
Հեռացար քեզ համար, առանց ցաւ:

Իսկ ես հեզ, փրփրադէզ ծովի մէջ  
Պիտ լողամ ու դողամ մինչև լոյս.  
Մինչ ծագի նոր այգի լուսաէջ  
Վառ արփին սև ափին արշալոյս:

Լուսաշող, յուսաշող ջինջ շողին  
Անհառաչ ընդառաջ ես կ'երթամ,  
Եւ պսակ ու դրօշակ յազթողին  
Կը հիւսեմ ես վսեմ ու փարթամ:

Դու խղճուկ, կամացուկ յետ կուգաս,  
Կը ձգտես գողի պէս ինձ սիրել.  
Իմ ոյժից, վրէժից յետ կ'երթաս՝  
Յաղթուած և առուած անարգել:

Ես քեզ չգիտեմ, երբէք չեմ տեսել՝  
Գիտեմ, որ դու կաս—ով էլ որ լինիս.  
Այն ցաւն ես կրում, տանջանքն անասել—  
Որ տոչորում է՝ քեզ, ինձ—ամենիս:

Գիտեմ, որ լքուած կամ սրտատուչոր  
Ծծում ես կեանքի թոյնը լիովին,  
Անհուն յոյսերով նայում ամեն օր  
Մի ուրիշ կեանքի ծագող արեին:

Գիտեմ, որ բանախ մահահոտ գրկում  
Ձեռքերիդ շղթայ—ազատ մտքերով  
Դէպ ափ դուրս դալու յոյսն ես առկայծում,  
Գոռ յորձանքներին դիմում անխռով:

Ես քեզ չեմ տեսել երբէք, չգիտեմ,  
Սակայն ամեն տեղ, գիտեմ, որ դու կաս—  
Ու անեղ ժամին, կուում մեծ, վսեմ  
Քո, իմ—ամենքի ոյժն է անպակաս...

Համ, սողում էինք—թշուան ու վախկոտ,  
Գոյութեան համար, հաճոյքից դրդուած.  
Ու մեր վզերը՝ տոկուն ու ջլոտ՝  
Միշտ խոնարհ թեքում ուժեղի առաջ:

Կեցցէ՛ տանջանքը, որ համբերութեան  
Ակըն անսպառ իսպառ չորացրեց.  
Սողալուն սովոր անխորտակ հակման  
Ծիլերն անարգ մեր սրտից ջնջեց:

Կեցցեն՝ կառափներ, մտրակ, կախաղան,  
Սովալլուկ ամբոխ, և՛ կարիք, և՛ հաց,  
Արեան հեղեղներ, ուր կեանքի գարնան  
Շողերն յուսոյ մեր դէմ շողշողաց:

Կեցցէ՛ մարդկութեան տանջանքի երկունք,  
Նոր գաղափարի ծնունդն արդար.  
Էլ չենք խոնարհի մենք վիզ ու թիկունք—  
Համ, սողում էինք, բայց էլ չենք սողար...

## ԱՅՆՏԵՂ ԳՆԱՑԷՔ...

Նուէր նրիտասարդութեան.

Այնտեղ—ուր որ խեղճ գեղջուկն անհաց,  
Տգէտ՝ խաւարի մէջ է խարխափում,  
Երաշտից, ցրտից, անսերմ մնացած  
Կծղած արտերը տրցունքով թրջում.  
Այնտեղ—հանքերի մռայլ խորքերում,  
Գործարաններում, ծովի ափերին՝  
Ուր որ բանուորն է բեռի տակ տնքում՝  
Գէթ կուշտ ապրելու տենչանքը դէմքին.  
Այնտեղ,—բանտերում՝ ուր շղթայակապ  
Հիւանդ օրերի հերոսն անահ  
Տանջուում է լռիկ, վշտով անփարատ,  
Օրերը հաշուում անարգուած մինչ մահ.  
Այնտեղ—անառակ, լկտի որջերի  
Թունալի դրկում ապականութեան՝  
Ուր որ մոռացուած խեղճ ընկածների  
Կեանքերն է մաշուում առանց գթութեան.  
Այնտեղ—ուր չկանց ո՛չ յոյս, ո՛չ հաւատ,  
Ո՛չ սէր—միութիւն, ո՛չ մի սփոփանք—  
Ուր որ կեղծիքը, սուտն յուսահատ  
Իշխում է բարուն ու չկանց փրկանք—  
Այնտեղ գնացէք...



Այնտեղ գնացէք—սօցիալիզմի  
Լոյսը տանելու այն մութ խաւերում՝  
Ուր որ իդէալը խուլ տանջանքների  
Մեղսոտ սեղանին միշտ զոհ է բերւում.  
Այնտեղ գնացէք - նրանց հաւասար  
Մարդկային կեանքի լուծը տանելու՝  
Որպէս «հովիւ քաջ» իւր հօտի համար  
Պատասխանատու...

Ժեռ քարափին արծիւ նստաւ,  
Արծիւ նստաւ ու երգեց.  
Ջորի միջին աղջիկ տեսաւ—  
Նշխուն տեսքէն զարնուեց:

«Հէյ, ջան աղջիկ, մարալ աղջիկ,  
Ափսոս թուշիկ չգիտես.  
Էդ ծմակում լռիկ-մնջիկ  
Պիտի թոշնես ծաղկի պէս:

Թէ թուշիր—իմ ժայռերին  
Քեզ թագուհի կ'ընտրէի,  
Քուն գար աչքիդ՝ իմ թևերին  
Անուշ երգով կ'օրրէի:

Էդ աչքերդ՝ ինձ սև գիշեր,  
Ժպիտո՞ք՝ վառ արեգակ,  
Անծէր երկինք քեզ չէր իշխեր  
Ու կը լինէր հպատակ:

Եարար թուշիկ հէ՛չ չգիտես,  
Քեզ ո՞վ ծնեց առանց թև.  
Եարար կեանքում հէ՛չ ուզած չես  
Օգու՞մ թուշիկ միշտ թեթև...»

Էսպէս երգեց ժեռ քարափէն  
Հպարտ արծիւն անգուման.  
Թռաւ, անցաւ սարէն, ձորէն,  
Լալով բախտըն աղջկան:

Յառանջ, միշտ յառաջ... Անկցի գերութեան  
Կաշկանդող շղթան.  
Այսօր թէ վաղը—մերն է յաղթանակ  
Սուրբ ազատութեան:  
Չէ որ ծնունդ ենք ցուրտ նկուղների  
Անհաց ու քաղցած,  
Տառապանքների, տանջանքի սալին  
Կռած ու կոփուած.  
Չէ որ անցել ենք կեանքի ճահիճով  
Մենակ, տարապիւր—  
Ուժեղին՝ հլու, վզերս ծռած,  
Որպէս բեռնակիր:  
Վայելուչ կեանքի չեղանք մասնակից  
Գծուծ ու մրոտ՝  
Տիրողի համար մանուկ հասակից  
Թշուառ մնացորդ...  
Բաւ է, ընկերներ. պարզենք կոշտացած  
Մեր ջլոտ ձեռքեր—  
Յառանջ համարձակ, կեանքի մեծ բեմում  
Փոխուում են դերեր...

Երկրից ելած գուրըշին՝  
Ծով-ովկեանի ջինջ փոշին  
Մի օր սաստիկ վհատուած  
Այցի ելաւ առ Աստուած:  
— Տէր, յոգնել ենք վեր ու վար  
Միշտ շրջելուց գերեվար.  
Տուր արձակուրդ, վար իջնենք,  
Մենք էլ մի քիչ օր տեսնենք:  
«Իջէք...» ասաց միամիտ  
Աստուած՝ դէմքին մի ժպիտ:  
Եւ փաթիլներ ժըրաջան  
Երգ ու պարով վար իջան:  
Իշխեց պառաւ ցուրտ ձմեռ,  
Դաշտը սզաց կիսամեռ,  
Գետերն յստակ ու վճիտ  
Հագան սառցէ քղամիդ:  
Պայթեց կռիւ դենիտում.  
Աստղ ու լուսին խիստ տրտում  
Դալուկ շղարշ քօղ հագած՝  
Կեցան անլոյս և հանգած.  
Ոգիները օգային  
Կպան Տիրոջ սուրբ գահին,  
Էլ չուզեցին գիշերով  
Թռչել գողտրիկ յուշերով:  
Ցուրտը հարթեց իր ուզին,  
Փռեց քամուց անկողին.  
Նորա շնչից չքացան

Արծիւ, ծիծառ ցիր ու ցան:  
Մինչդեռ երկրի գոլորշուց՝  
Ծով-ովկեանի ջինջ փոշուց  
Ո՛չ մի լուր կար, ո՛չ էլ ձայն—  
Օրն ու ժամը դար դարձան:  
Աստուած կանչեց արևին,  
Սիրով ժպտաց բարևին,  
Հրէ, բոսոր-լուսահեղ  
Տուեց նրան նետ-աղեղ.  
«Գնան, ով քաջ պատանի,  
Գաիր փոշին ովկեանի,  
Քեզ արշալոյս-վերջալոյս  
Կը տամ ընծայ, աչքիս լոյս»:  
Երկիր փախած գոլորշին՝  
Ծով-ովկեանի ջինջ փոշին,  
Որ սիրատարփ անուրջում  
Իր սիրերգն էր մրմնջում,  
Քընաթաթախ հառաչեց,  
Հուր նետերից շուտ հալչեց,  
Դէմքով ախուր, մեղապարտ  
Ճօճուեց երկինք լճու, հանդարտ:  
Աստղ ու լուսին վեր թռան,  
Սգի քօղը վար առան.  
Երկինք ուրախ, գոհ ժպտաց,  
Ոգիք թռան գրկարաց:  
Այն օրուանից մինչ այսօր  
Արփին հպարտ՝ հուր-բոսոր,  
Երբ ծագում է, մայր մանուկ  
Հըրաշավառ զենիտում,  
Երկրից ելած գոլորշին՝

Ծով-ովկեանի ջինջ փռշին  
Հուր նետերի տարափից  
Կարմըրում է ամօթից,  
Որ յազթուած արևից  
Եւ ծաղրուած ամենից՝  
Պիտի շրջէ վեր ու վար  
Ըստրուկ ու խեղճ, գերեվար...

Երազ ես տեսայ—երկնականամարից  
 Շքեզ, բոցավառ մի ջահ էր կախուած.  
 Ճօճում էր նրան զով քամին վարից,  
 Անահ թևերով բոցերը գրկած:

Ա՛խ, լաւ էր այնպէս... և բոսոր լոյսին  
 Երկիրն էր նայում ակնապիշ, լռիկ.  
 Ինչպէս սիրահար՝ որ մատաղ կոյսին  
 Միայն տեսնելուց գոհ է, երջանիկ:

Թռայ սրարշաւ հե ի հե ես վեր,  
 Վաթան, քեզ համար... որ լոյսը միայն  
 Խաւար քո դէմքին մօտ-մօտիկ կախուէր,  
 Քեզ լոյս տար, ազիզ, շողար յաւիտեան:

Ահա մօտեցայ ես նրան անշեղ.  
 Ջահը պինդ գրկած սլացայ դէպ վար.  
 Բայց նա մարեցաւ... խաւար է անեղ...  
 Ա՛խ, կախուած էր նա ամենքի համար:

Անձանյր տափարակ... գետինը-սառած,  
 Չեան կարծր շերտի հիւրընկալ գրկին  
 Դէմքը ցաւագար խնամքով ծածկած՝  
 Լճու մտորում է վիշտըն անմեկին...  
 Բքաշունչ քամին վազում սանձարձակ—  
 Ոռնում է, ճչում... կամ պաղ թևերով  
 Ծեծկում է գետնին և իւր անգունակ  
 Հին կսկիծներից երգում է լալով:  
 Մառախուղը դորշ տձև փեշերի  
 Ծալքերն երկնքում համարձակ ձգել,  
 Ծածկել է չքնաղ լուսնի, աստղերի  
 Լուսաբեր ցոլքն—ազատ, անարգել . .  
 Եւ անա հեռուից ինչ որ մութ գծեր  
 Սևին են տալիս, ճօճում անհաստատ,  
 Ճօճում, երերում՝ կասես ազուաներ  
 Քաղցից շուարած, ծարաւ կամ քնհատ:  
 Եւ դաշտավայրի սպիտակ կրճքին  
 Որպէս չորացած վէրքերի սպիներ.—  
 Այն սև գծերը լուռ և մոլեգին՝  
 Տաղնապ են ազդում, սարսուռ անարեր...

Ահա կանգ առան... խառնուեցին իրար ..  
 Մի խոնկ հարուածից տնքաց ու դողաց  
 Ամայի դաշտը... քամին թևահար  
 Պինդ փարուեց երկրին, քարացած մնաց:  
 Եւ մի սոսկալի, խոլ հեկեկանքի  
 Խեղդած հեծկլտանք տարածուեց դաշտում,  
 Մի ամօթապարտ, մեղսոտ պատրանքի  
 Դիւային բրբիջ շնչաց օդում:



Ու աղեկատուր լալագին վշտի՝  
Հոգոց դուրս թռաւ երկրի երեսից.  
Եւ սևին տուեց սև յազթանակի  
Գարշիլի փառքին պատրաստուած մի ցից...

Ամենքը լուռ են... Մի լուռ պատմութիւն,  
Մարդկային կեանքի մի հսկայ հոսանք.  
Ապրածի՛ վերջը, նորի՛ յայտնութիւն,  
Դարերի ճնշման պոռթկումի թափից  
Ըմբոստ վիժուածքը տառապանքների,  
Անարգ բնութեան սուր ճիրաններից  
Նորածիլ սաղմը ազնտ մտքերի,  
Հաւասարութեան միակ փրկարար  
Վեա գիտակցութեան ծնունդը հսկայ—  
Օրնիրուն փթող, անվերջ հողմահար  
Տիրող կարգերի լուծն արճիճեայ՝  
Կանգնեցին անխօս, դէմ առ դէմ այնտեղ—  
Այդ ոչնչացման տխուր հանդէսի  
Սոսկալի ժամին... այն ժամին անեղ  
Երբ սոսկ մարմնացած դմբը կը խօսի...

Քամին դողալով շոյում է, գգւում  
Այն լուռ դէմքերին և իր վշտահար,  
Մենակ, անընկեր կեանքից անխնդում  
Պատմում է նրանց, լալիս անդադար:  
Նա մերթ քծնելով սև Փարաջայի  
Երկար փեշերն է վախկոտ փողփողում,  
Եւ այն ծեր ձեռքում բռնած սառ խաչի  
Շուրջը զարմացած գալարում, խաղում:

Նա մերթ այն դաժան դէմքերից ցասկոտ  
 Թռչում է հեռու ու սիւնին դիպչում,  
 Կամ սիւնին կապած էակի թախծոտ  
 Այրուող ճակատը պաղ թևով շփում:  
 Թշուա՞ն էակի... նրան վերցրին  
 Մի պայթած ոռւմբի փշրանքների մօտ  
 Որտեղ փորուել էր—իր ջահէլ կեանքին,  
 Զախջախուած մարմին—առանց ձեռ ու ոտ,  
 Բռնութեան ճնշող հաճոյքին յարմար  
 Մի անդարձ անդունդ—ըմբոստի համար...  
 Եւ ա՛հ ինքը՝ մարդկութեան որդին,  
 Տառապանքների, անարդ բռնութեան  
 Ըմբոստ մարտիկը—իր նմաններին  
 Փրկելու համար ելաւ կախազան:  
 Ի՞նչ հոգ խաւարի սև հոգիներին  
 Որ նա կէս մարդ է... որ նա տրորուած  
 Արիւնաշաղախ մի վիրոտ մարմին,  
 Սպինների մի ցանց, ձեռք-ոտք կորցրած...  
 Չէ՞ որ թշուառի խիզախ կրծքի տակ  
 Դեռ ևս տրոփում են զարկերը վերջին,  
 Այն ըմբոստ հոգու տենչըն անխորտակ,  
 Յագեցած վրէժի ցոլք կայ աչերին:  
 Չէ՞ որ արնաքամ, չորցած շրթերում  
 Արհամարանքի խաղում է ժպիտ,  
 Ու մի ստահակ, գոհունակ խնդում  
 Տիրում այլանդակ մարմին չոր, վտիտ...  
 Հա՛, կատարուել է... պէտք է շուտ մեռցնել  
 Բախտաւորներին արհամարողին.  
 Պէտք է շուտ խեղդել, արմատից խլել  
 Ըմբոստ խլրտման ծիլերը վերջին...

Եւ անա թշուառ դատապարտեալին ...  
Լուռ մօտենում է ծերուկ քահանան՝  
Ստրուկի շղթան փշրել ուզողին—  
Համբուրել տալու հաւատի շղթան...  
Յետ տանք քո խաչը...

Յետ տանք քո խաչը—զործիքն յարմար  
Անվերջ կեղծիքի, լպիրշ քսութեան.  
Անխախտ պատճառըն—արուած ոտնահար  
Ամեն մի տենչի թշուառ մարդկութեան:

Յետ տանք ազգերի տիտան կապանքի—  
Վեհ ձգտումների, սուրբ ճշմարտութեան,  
Գիտակից մտքի—ազատ վայելքի,  
Շաղկապ իդէալի—հաւասարութեան,  
Եւ սասանական անվերջ ջարդերին,  
Անմեղ զոհերի անզուժ սպառման՝  
Վաղճեց կեղծուած ժանգոտ բանալին...

Յետ տանք մոլեռանդ, անմիտ ու անհամ  
Կեղեքիչների զէնքը—բառաթեւ՝  
Որ պաշտուեց երկան, երբ ամեն անգամ  
Տնքում էր մարդը—մտքով կոյր, անթեւ...

Յետ տանք... նրանից արիւն է ծորում,  
Վազում արցունքի, շարաւի հեղեղ,  
Բիւրաւոր, անթիւ զոհերի լքում—  
Ղօղանջում մահուան նզովքով անհեղ...

Յետ տանք—տրորուած ըմբոստ պանդերի  
Տաք-տաք, բաբախուն—արիւնաշաղպաղ

Թարմ ուղեղներից—հաւատողների  
Կոփանքի սալը—և խաչը՝ աւանդ...  
Ահա մեր խաչը—սե սիւնը անարգ,  
Փրկութեան համար հանուած Գողգոթա,  
Ահա և ինքը՝ նոր լոյսի պաւակ,  
Որ ազատութեան հարթում է ճամբայ...

Բքաշունչ քամին վշտից կարկամած  
Ունում է, ճշում. իւր պաղ թևերով  
Ծեծկում է թմբին, կոյտերի սառած  
Փշրանքը արնոտ գուրգուրում լալով...

---

ՄԵՆՔ ԷՆ ՄԻԱՆԱՆՔ.

Էս փոռչ աշխրբի դարդն ու բալէն  
Հերիք մեր ուսին իւր բեռը շարէ.  
Աղի արցունքն էլ անդադար լալէն  
Հերիք աշերիս ցոլքերը մարէ:

Էս բեռ օրէնքին հերիք դուլ-դուրպան  
Էզնին մեր գարնան ալ-կանաչ օրեր,  
Ու չորս սլատի մէջ մոռցած, անսլաշտական  
Հերիք մեր դիմաց փակուեն բաց դռներ:

Ա՛րի, քուրիկ ջան, ձէն տանք աշխրբին,  
Մեր ընկերներին թեզ ոտքի հանենք.  
Էս սե, դարաքաշ, անվայել կեանքին  
Մի ելք, մի ուղիղ ճամբայ բաց անենք:

Ա՛րի, քուրիկ ջան, մենք էլ միանանք,  
Էն մենծ, սուրբ կուռին էզնինք մասնակից.  
Հերիք շղթայուած ու գերի մնանք  
Դուման մտքերով, շշմած զրկանքից:

Թող էն բախտաւոր մեր տղայ-մարդիկ  
Շատ չհպըրտնան, որ առաջ անցան,  
Էնոնք առանց մեզ, հաւատան, քուրիկ,  
Թեզ տեղ չեն հասնի—կ'ընկնեն ցիրուցան...

Էրթանք, քուրիկ ջան, անվախ, միասին  
Մեր արդար դատին զոհած ամեն բան.  
Էն ազատ կեանքի սրբազան լուսին  
Ամենքն են հաւսար՝ կուռողը արժան...

## ԱՐԾԻԻԸ.

Հսկայ ժայռերի լանջին բարձրանիստ

Արծիւը հպարտ՝

Նստած էր հանդարտ.

Յողնած թևերին նա տալով հանգիստ՝

Երկիրն էր դիտում

Մտախոհ, տրտմամբ:

«Տխմւր է որքան վարը՝ այն խորում.

Երկրում բովանդակ

Ծանր լլծի տակ

Հեծում են մարդիկ, տնքում բանտերում

Անազատ կեանքից,

Ճնշուած գրկանքից:

Ատում եմ նրանց՝ կս անբան թռչուն՝

Եթերի զաւակ.

Ազատ երկնի տակ

Ձայն ունիմ հզօր, ճիչերըս՝ հնչուն.

Երբէք չեմ սողում

Որպէս դճրշ սողուն...

Երբէք չեմ տեսել մարդուն բանաւոր

Բարձրունքների շրջած,

Եւ ազատ շնչած

Կապոյտ անհունի շունչը փառաւոր՝

Ինձ պէս սրարշաւ,

Թռիչքի ծարաւ...

Ի՞նչ կայ կեանքի մէջ այնքան ցանկալի,  
Երբ՝ բաց թևերով  
Օդը ճեղքելով,  
Թռչում եմ հեռու տենչով անձկալի  
Ազատ դէպի վեր՝  
Հպարտ, անվեհեր...»

Ասաց արծիւը... և թևատարած  
Սլացաւ օդում.  
Իսկ վարն՝ անդնդում  
Ցուրտ տառապանքից լին, համատարած,  
Խեղճ մարդն էր տնքում  
Անիծուած կեանքում...

---

ՓԱՐՈՒԱՆԱՅԻ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ.

Լեռան լանջին, ժայռի գրկին  
Ես նստած եմ մեն-մենակ,  
Շուրջս խաղանդ... զովիկ քամին  
Թլպլտում է սանձարձակ...

Թլպլտում է—խանդ է անում  
Քնաթաթախ բոյսի հետ,  
Գլուսում ծաղկին, համբոյր քաղում  
Թերթիկներէց հոտաւէտ:

Թլպլտում է—խաղ է անում  
Փարուանայի ջինջ կրծքին,  
Ծածան-ծածան ալիք հանում,  
Որ քուն չգայ աչերին...

Ծեկծեկում է ու նաղելով  
Կոտրւում է Փարուանան,  
Ափին տալիս, հովին ժպտում  
Երգ է երգում դիւթական...

Անցած փառքի երգն է երգում  
Քաջի մահը անձնագոհ,  
Չայնակցում է նրան ձորում  
Արձագանգը մտախոհ...

Եւ ծղրիտն է անվերջ ծղրում,  
Աւերակի ձերպերից,  
Չարագուշակ բուն է վայում  
Ոոժոռ ժայռի լիրկ կրծքից:



Հեռան լանջին, ժայռի գրկին  
Ես նստած եմ մեն-մենակ,  
Ապրած փառքի լճու մեղեդին  
Հոգուս կը տայ արձագանք...

---

Գիշերն իջաւ. ճամբայ ընկաւ  
Մայր—լուսին,  
Մի անտարբեր, անհոգ ժպիտ  
Երեսին...  
Ամպիկները նրա ճամբին  
Բոլորուած  
Յետ-յետ փախած՝ կասես լոյսից  
Մոլորուած:  
Ո՞ւր էք փախչում, այ տխմարներ  
Շող-լոյսից...  
Շուրջը պատէք, շողեր առէք  
Երեսից...»  
Ամպիկները — տխումբ, տրտում  
— Լողալով...  
Երգ հրգեցին հեծկտանքից  
Դողալով.  
— Աշխարհի մէջ տառապանքի  
Մարդկութեան  
Աղի-լիղի արցունքները  
Մեզ ծնան.  
Մենք վեր ելանք երկնից գութ, սէր  
Հայցելու  
Ժանտ գերութեան կսկիծներին  
Վերջ տալու...  
Լուսինն առանդ, Տիրոջ առաջ  
Բարեխօս  
Չուզէ լինել—անտարբեր է,  
Լ՛սու, անխօս...

Յետ ենք փախչում, լուսնից խորշում՝  
Մեր ցաւով՝  
Երջանիկ է, սիրտը կարծր,  
Անխուով:  
Առաւօտ վաղ երկիր կ'իջնենք  
Անխնդում,  
Ծաղիկների նորաբողբոջ  
Թերթերում  
Կ'երգենք վիշտը տիեզերքին  
Խեղճ մոլոր.  
Միայն նա է վշտին ընկեր  
Ու սովոր...  
Ու լողացին ամպիկները  
Երկնքում,  
Երկրի վշտով, լուսնից յետ-յետ  
Անլքում:  
Առաջ լողաց արագ-արագ  
Մայր—լուսին՝  
Մի անտարեր, անհող ժպիտ  
Երեսին:

---

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ.

Հէյ... վեր կ'աց գեղջ'ուկ. դ'ուք, ընկեր-եղներ՝  
Գնանք շուտով արտ.  
Հուժկու եռանդով սև կուրծքը ճեղքենք  
Մայր հողի պարարտ:  
Շրջենք յետ-առաջ, երկնի գծերով  
Փորենք ակօսներ՝  
Սուրբ աշխատանքի որպէս ժրջան,  
Անվախ հերոսներ...  
Արևը ահա փայլում է վերից  
Գթառատ սիրով,  
Անճշտ գոլորշին շղարշի նման  
Ճօճում դաշտերով:  
Բացուած բներից գործի է դիմում  
Անհամար մըջիւն,  
Մայր-հողն է ծնում, գետը տարածում  
Թովիչ կարկաչիւն:  
Հէյ... վեր կ'աց եղնուկ, հերիք մրափես.  
Վեր կ'աց սերմնացան՝  
Գնանք շուտով արտ, շաղ տ'ուր հատիկներ  
Այնտեղ ցիրուցան:  
Կարօտ եմ ինչպէս հողի զով շերտում  
Դէմքս պարտկել՝  
Որտեղ գորշ որդեր ահող գալարուած  
Գիտեն միշտ պառկել.  
Կուզեմ ես հիւթոտ ծիլերի ցանցեր  
Համբուրել սրտանց,  
Հողի շուկից արբել, մոռացուել  
Խորքում անթափանց:

Հէյ... վեր կանց, գեղջուկ, վեր կացէք եղներ

Միթէ չէ՞ք զգում—

Արտերը վաղճւց սերմի կարօտից

Լալիս են, սգում:

Այս ի՞նչ եմ տեսնում... գեղջուկն է զալիս

Գլխակոր, արտում:

Կիսամերկ, գծուծ, թախծոտ հայեացքով

Ինչ որ վնթփնթում:

Թշուան, դարշ միջատ, գէթ կուշտ լինելու

Չունեցար հնար...

Ըստրուկ՝ կեանքի մէջ, արդար վաստակից՝

Հեռո՛ւ, անհընամր...

Ինձի երկինք ասաց սիրիւր,  
Բերեց ծաղիկն ինձ համբոյր.  
Հոփս էլ ասաց—հէջ մի տխրիւր  
Ու սէր երգեց ինձ բլբուլ:

Աղբիւրն ասաց—առաւօտ վաղ  
Արի գիրկս՝ հարիդ տես,  
Մշուշն ասաց—աղջիկ չքնաղ  
Ահն քեզ քօղ հարսի պէս:

Խոր ձորակն ինձ տեղ տուեց,  
Որ հարիս հետ թագնուեմ.  
Պաղ վտակը մրմունջ հանեց  
Որ մեր ձայնը չլսեն...

Բայց մասնեցին մեզ չարքերը  
Գիւղը խօսեց մեզ վրայ...  
Ֆալջին ասաց մեր աստղերը  
Իրար հէջ չեն մօտենայ...

Ու ափուիս իմաց տուին.  
Ա՛խ... ծամերս քաշքշեց.  
Ատած տղին ինձ հարս արին,  
Կարմիր օրս խաւարեց...

Չէ որ երկինք ասաց—սիրիւր,  
Բերեց ծաղիկն ինձ համբոյր.  
Հոփս էլ ասաց հէջ մի տխրիւր  
Ու սէր երգեց ինձ բլբուլ:

Ինձ մի սիրիր՝ որպէս գարնան  
Բողբոջ ծաղկին քնքշօրէն.  
Կամ տաքարիւն քո առնական  
Վառ հեշտանքով կուրօրէն:

Երագներով մի տար սնունդ՝  
Հողիս չարբի անուրջից,  
Բնց իմ դիմաց կեանքի անդունդ—  
Վէրքն ու ոճիրն իւր միջից:

Թող որ քեզ հետ ես համարձակ  
Ծծեմ թոյնը՝ տանջանքի.  
Լինեմ ազատ, խօսեմ՝ արձակ,  
Ձգտեմ լոյսին՝ փրկանքի:

Եւ ամենքի վշտին մօտիկ  
Մտնեմ այն մեծ խաչի տակ,  
Որ տանում են ըմբօստ մարդիկ  
Դէպ ընդհանուր նպատակ:

Թող փորձերից սիրտս մաշուի  
Կրեմ զրկանք ես անվերջ.  
Դալար ճակտիս կնճիռ շարուի  
Այս բարբարոս կեանքի մէջ:

Եւ երբ հպարտ, ձորձեր, հագլիս  
Ելնեմ կարօտ քեզ այցի՝  
Այն ժամ չոքիր, փարուիք կրծքիս,  
Խնդրիր սէրս կանացի...

Այն վառ սէրը—որ չարգելեց  
Լինել ինձ մարդ, կին և մայր,  
Որ ընկերիս միշտ ըստփոփեց՝  
Երբ մենակ էր, վշտահար...

Ինձ մի սիրիլը ծաղկի նման,  
Կուղեմ ապրել արժանի՝  
Որպէս հիւլէն՝ վշտի տիտան,  
Որպէս զաւակ՝ խուժանի...

---



Նա՛ մի աստղիկ է կապոյտ երկնքում  
Աստղոտ գիշերին պսպղում լուիկ  
Իսկ ես՝ պարզ վտակ կանաչոտ ձորում  
Շողերը գրկած մտորում մնջիկ

Նա՛ զով զեփիւռ է թևերը պարզած  
Դալար դաշտերով անսանձ ծածանում—  
Իսկ ես՝ վառ ծաղիկ թերթերս բացած  
Փարւում հոսանքին ու համբոյր քաղում:

Նա՛ մի չինար է պարտիզում բուսած  
Դալար ճիւղքերը հովից օրօրում—  
Իսկ ես՝ մի ճամբորդ արևից այրուած  
Զով ստուերի տակ անսլշ մրափում:

Նա՛ վարդի թուփ է սիրուն վարդերով  
Սուր-սուր փշերը ծածկած, թագքրած—  
Իսկ ես՝ մի սոխակ սրտով վիրաւոր  
Գովում, զեղզեղում իմ վարդը սիրած...

Աշնան աւրող քարուանն էկաւ՝  
Երկինք, երկիր սև հագան,  
Քամին դարդէն սարերն ընկաւ,  
Աստղունք, լուսին սոսա հանգան:

Խշխշալով նոճին կուլայ,  
Լճակն ապուշ՝ ցոլք չունի,  
Չկայ շուշան, կարմիր լալայ,  
Երգն է լուր թռչունի:

Էս ի՞նչ էղաւ... իմ խենթ սրտում  
Մորմոք երգեր թնդացին,  
Աշնան օրուայ շնչով տրտում  
Խորունկ վէրքս ետ բացին:

Չէ, դուք կեցիք, ինձ աշուն չէ,  
Մի՛ լար, իմ սիրտ—իմ բալայ.  
Դարդու աշուն ինձ հէջ պէտք չէ—  
Էնոր ձեռքէն ես չեմ լայ...

Խաւար է... գիշեր... հեռու գննիտում  
 Մըշուշի միջից դալուկ գէմքերով  
 Ներհում են անդոյն աստղերը տրտում,  
 Սոսկումով պատած մարմըրում շուտով:  
 Տընքում է հողը. շնչով մահահոտ  
 Վիշտն է գալարում երկրի երեսին,  
 Օդի թևերին կըսկիծի լացոտ  
 Մրմունջն է հնչում չկայ և լուսին. .  
 Բայց դուք կամեցաք մըցել երկնային  
 Վառ կանթեղների լոյսի հետ նսեմ,  
 Եւ ձեր բազմաթիւ լապտեր-ջահերին  
 Մի ակնթարթում կեանք տուիք վսեմ:  
 Եւ ահա մըռայլ, անմարդ փողոցում  
 Մէջ կէս գիշերին ձեր պալատներից  
 Շոյում են լոյսեր մթութեան ծոցում  
 Շքեղ զարդարուած պատուհաններից:  
 Դուք տօն էք տօնում ու զւարճանում  
 Այնտեղ՝ հոյակապ մտքի, հանճարի,  
 Ոսկու, արծաթի, վայելքի գրկում—  
 Ու բարեմաղթում ամենքին բարի...  
 Դուք տօն էք տօնում ու զւարճանում  
 Ուր ամեն բարը ունի պատմութիւն  
 Իւր տակը ճըզմած թռուառ զանգերի,  
 Ուր որ աղիւսը ծծել է արիւն  
 Ու կաթիլները—աղի բըրտընքի...

Դուք տօն էք տօնում խրոխտ թնդացնում  
Ուրախ քրքիջով բարձր պատերը,  
Որոնց վրայից քաղցած, անխնդում  
Ընկաւ թշուառը, փշրեց ոտքերը...  
Եւ լապտեր-ջահեր շողում են պայծառ  
Ու լոյս տարածում ձեր կուշտ դէմքերին՝  
Մինչդեռ խիղճերդ կարծ՛ր է ինչպէս ժայռ—  
Մշտական խաւար՝ սրտերիդ բաժին:  
Հանգցէք ջահերը...

Եւ թող շարէշար ձեր ճոխ սեղանի  
Շուրջը հաւաքուեն քաղցած ու տըկլոր  
Անտէր որբերը այն թշուառներին՝  
Որոնց դուք թողիք առանց հօր ու մօր:  
Եւ թող շարէշար գծուծ, ոտաբաց  
Շէմքերդ լիզող հաւաքուեն մայրեր,  
Որ փողոց ընկան մուրալու չոր հաց  
Ու ձեր պալատում փնտրեն շիրիմներ  
Այն բանուորներին—ուժ կեանքի գնով  
Երկինք բարձրացան շքեղ տներիդ  
Բարձր պատերը ճարտար քանդակով  
Վարդակ լինելու փարթամ կեանքերիդ:  
Եւ թող շարէշար, արնոտ, ուշաքաղ  
Յօշոտուած մարդկանց սև ուրականներ  
Խոնաւ փոսերում թողած չոր դագաղ՝  
Ձեզ այցի ելնեն տեսքով մահաբեր...  
Ձեզ հետ տօն տօնեն ու զւարճանան  
Այլանդակ կեանքի վայրագ քրքիջով,

Երգեն զրկանքի երգը հոգեհան—  
Զոր հացի երգը — մահուան մրմունջով:  
Եւ խաւարի մէջ խաւար գործերիդ  
Պատմեն արգասիք թշուառ անյքերի  
Ու հանեն անեղ դղորդ ու շոինդ—  
Անարդարութեան սև կապանքների...  
Հանգրէք ջահերը. . .

---

Դարդերի քամին ինձ քշեց հիւսիս,  
 Հեղեղն արցունքի թևերս տարաւ.  
 Զկայ Ալագեազ, չկայ ծեր Մասիս—  
 Թոշնում է սիրտս կարօտով ծարաւ:

Այս տափակ երկրում, անձայր փռշերով,  
 Մի մամռոտ ժայռի կտոր չտեսայ—  
 Ղարիսզ գլուխս հանգչէր գիշերով,  
 Ես հարս լինէի—ինքն ինձի փեսայ.

Եւ դարդս անտակ, մրմունջս տրտունջ  
 Պատմէի գաղտուկ—հոգիս հովանար.  
 Մտքերս ծեծկուած, սիրտս անտերունջ,  
 Պաղ հովին տայի—ազանս սլանար:

Դալար խոտերի կախարդ հէքեաթից  
 Քուն գար աչերիս—նիհրէի անուշ,  
 Ու կէս գիշերի շաղակաթ սրտից  
 Յող իջնէր վրաս, ցոլցոլար քնքոյշ:

Առաւօտ կանուխ, կայտառ բողբոջուն  
 Քանց նորափթիթ դաշտային շուշան,  
 Կարմիր արևին հս տայի ողջոյն,  
 Հովիկն ինձ գգուէր մեղմ, ծածան-ծածան:

Դարդերի քամին ինձ քշեց հիւսիս,  
 Հեղեղն արցունքի թևերս տարաւ.  
 Զկայ Ալագեազ, չկայ ծեր Մասիս—  
 Հուր երազներիս ցոլքերն էլ մարաւ...

ԳԱՐՈՒՆ Է...

Գարուն է... գարձեն... երգեր էլ չկան  
Վէրքեր էլ չկան...  
Անդորր են ուզում՝ մտքերս հիւանդ,  
Մուսաս սիրաւանդ:  
Թող ինձ հարազատ, թող ըիչ մոռացուիմ,  
Նիհրեմ, չզգացուիմ.  
Մեծ վիշտը սրտիս ծաղիկների մէջ  
Մտորիմ անվերջ.  
Նայեմ արևին—թող սրտիս խորքի  
Սառնամանքի  
Հալչեն սառոյցներ—սէր ու խինդ թռչնած  
Արևից օրհնուած  
Թող առնեն աւիւն... գարձեն է, գարուն,  
Անդորրն եմ սիրում...

ԿԸ ՀԻՒՍԵՄ ԵՐԳԵՐ.

Բարձիր ուսերիս քո բեռը—կսկիծ  
Ողբերն ու ճիչեր անհուն տանջանքիդ,  
Վհատ կասկածդ և սրտիդ անբիծ  
Բուրբ ցաւերը և խաչը կեանքիդ:

Թո՛ղ կաթիլներով՝ ճնշման կապանքից,  
Կաթեն սրտիս մէջ տենչերդ մարած,  
Տգէտ խաւարում, գլխիդ անձկալից  
Ըմբոստ խլտման ծիւերը խամբած:

Ես քո սար-բեռան հլու բեռնակիր,  
Կը սուզուիմ վշտի անյատակ ծովում,  
Իսկ դո՛ւ աշխարհում նորից արծարծիր՝  
Սուրբ ազատութեան իդէալի երգում...

Եւ երբ ցաւի տեղ այդ ազատութեան  
Տիր եհրճուանքը երկրի երեսին՝  
Փշրին շղթաներ, բանտ ու կախաղան,  
Հնչեն շեփորներ նոր արշալոյսին—

Այն ժամ լեռ-բեռդ անյատակ ծովի  
Խորունկ խորքերում վշտիս հետ թաղած՝  
Ես վեր կը թռչեմ, կը փարուիմ հովի,  
Ալու թևերին՝ թեթև, թև առած:

Կը հիւսիմ ևրգեր՝ ազատ օրերի  
Անմահ, ոգեշունչ, բողբոջ յոյսերից,  
Կերգեմ նոր հիմնը—հաւասարների,  
Լոյսի ծնունդը՝ բղխած խաւարից:



Կանաչ ծառի,  
Ժիր ծիծառի  
Լուեց գողտրիկ մեղեդին.  
Ցեխոտ հողում  
Ցուրտն է թաղում  
Զքնաղ գարնան անշունչ դին:  
Մերկ անտառին  
Աստղը լռին  
Դժկամ ցուքով վայր հայեց.  
Սգաւոր բուն  
Ա՛խ, օրնիրուն  
Ունայն փառքին զի՛լ վայեց...  
Բայց իմ հողին  
Թափով ուժգին  
Եթերի մէջ է վազում  
Ամպին անբոյր  
Տալով համբոյր  
Ծաղկոտ գարուն երազում...

## ԱՌԵՂԾՈՒԱԾԸ:

Ահն՝ վար առայ՝ սև քողը սըզի  
Ես իմ քնարից.  
Եւ կուզեմ նորից  
Քարնան, վառ սիրոյ քաղցր նւագի  
Մեկանոյշ մրմունջ...  
Երգել անտրտունջ...

Այս մէկը ահն տանջանքի է լար,  
Ցաւերից հիւսուած.  
Որ միշտ տխրամած  
Լող վիշտ է երգում տխուր, միալար  
Աշխարհի ունայն,  
Խաւերից համայն...

Այս մի քանիսն էլ՝ բռնութեան ծովից  
Պոռթկած են են մէկ-մէկ,  
Որ միշտ վշտաբեկ՝  
Վրէժի անմար և անյաղթ բոցից  
Կ'երգեն անողոք  
Անէծք ու բողոք...

Սա... լարն է սիրոյ բարակ, սակեթեւ.  
Հովեւերգով սիրուն  
Երգում էր գարուն...  
Եւ հին օրերից գիտէ սիրտ դիւթեւ՝  
Ինչպէս մի անգամ  
Ասաց բարեկամ...

Խփեմ... և երգեմ սէր, ծաղիկ, գարձն,  
Եւ իմ սրտի խոր...  
Ա՛հ, այս ի՞նչ ժխոր,  
Խեղդուած հեծկլտանք... դիակներ... արիւն...  
Ո՞վ է արտասուում,  
Ո՞վ հնց աղերսում...

Լարը դողանջեց... ո՞վ էր որ կուլար...  
Ո՞վ էր՝ ինձ կանչեց. .  
Ա՛խ, տխուր հնչեց,  
Կըտըրուէց, մեռաւ սիրոյ երգի լար...  
Եւ ես կըսկըծից  
Զարթնիցի քընից...

---

Մութը պատեց դալարազարդ դաշտերին.  
Թռչունները կամաց-կամաց քուն մտան,  
Քնաթաթախ ծաղիկների վաշտերին  
Յողնած քամին նստեց հսկիչպահապան:

Կեցիր քամի, բաց աչքերդ սիրական՝  
Հէքեաթ ասենք, որ քներս չտանի.  
Տես վերևից մեզ է նայում լուսնկան—  
Նա էլ մեզ հետ ընկեր լինել կը կամի:

Մենք երեքս էլ խեղճ ճամբորդ ենք աշխարհում—  
Տուն-տեղ չունենք, ընկեր չունենք բնաւին.  
Կեցիր քամի, ի՞նչ ես այդպէս շուտ նիրհում,  
Իմ աչերիս քուն չէ եկել տակաւին...

Իսկ թէ ինչպէս ես կուղէի մրափել  
Խորճնկ, անվիշտ, դով թևերիդ ջան քամի...  
Բայց դու լսիր, ի՞նչ ես տխուր, լուռ նստել,  
Ա՛խ, իմ քունը դեռ չի տանի... չի տանի...

Ինչպէ՞ս, ո՞ւր փախչել—որ աչքիս առաջ  
 Չգան ու շարունակ արիւնոտ զոհեր,  
 Որ գիշեր-ցերեկ չլսեմ հառաչ՝  
 Սովի ու վշտի մորմոք գութաբեր:  
 Որ շուրջս տիրող անարդարութեան  
 Ոյժըն անպատիժ սիրտս վիրաւոր՝  
 Չմաշէ անվերջ ցաւը հոգեհան  
 Չփրշաքաղէ մարմինս ամեն օր:  
 Ինչպէ՞ս մոռացուել, չզգալ, չարտասուել,  
 Դադուած աչքերիս տալ մի քիչ դադար.  
 Ուսկից ոյժ գանել—և չկարեկցել  
 Նմանիս լքման, տանջանքին—անճար:  
 Բայց արժէ՞ փախչել—պահուել երկունքի  
 Ըմբոստ վայրկեանին, տարերքի անեղ,  
 Տապ բռնկումին. մեծ աւետիքի  
 Չլսել շահնդ—կուռի փառահեղ:  
 Ընկճումը—կորչի՞... Թող լինի այնպէս—  
 Ինչ պիտի լինի... տար ինձ, մեծ հոսանք—  
 Գանդս—ջախջախիւր. քո փրփրադէղ  
 Քոս ալիքներով՝ կուլ տուր և իմ կեանք:  
 Խփի՛ր, շփրտի՛ր վշտի ժայռերին  
 Կուրծքս—քրքրէ... Թող իմ արիւնն էլ  
 Արցունքս, հառաչ, ձուլուին, խառնուին՝  
 Թափ տան հոսանքիդ—թող մեռնիմ ջահէլ...  
 Տար ինձ... ցաւերի խարոյկ բովի մէջ  
 Թող եռայ հոգիս. էլ մէկիկ-մէկիկ  
 Չծխայ սրտիս մրուրն անշէջ—  
 Տար—ուր լափուում են՝ իղէալը, մարդիկ:

Ես թանփն եմ սիրում լոկ մի հարուշածի՝  
Կռիւը—լինել կամ չլինելու.

Վէրքը—մահացու, ցանցն արկածի՝

Ուր ակնթարթն է—պատասխանատու...

Դարդու աշուն սարէն իջաւ,  
Վազեց քամին հեալով.  
Չկայ ծաղիկ, վարդը թոշնաւ,  
Ծառը խշշոց սգալով:

Պարզ երկինքը մշուշ հագեր—  
Մտորում է տարակիր,  
Կռունկների շարան-շարքեր  
Ճամբայ ընկան տաք երկիր:

Այ կռունկներ խապար չունէք  
Իմ սիրունիկ աշխարհն,  
Ղարիպ սրտիս բարև չունէք  
Իմ չարչարուած քոյրերէն...

Ես էլ մի օր ճամբայ ընկայ  
Անցայ դաշտեր, սար ու ծով.  
Ղարիպ-ղուրպաթ երկիր եկայ—  
Սիրտս լիքը՝ յոյսերով...

Բայց իմ երկրի տապ-կարօտից  
Չորցան բողբոջ յոյսերս  
Այլ կռունկներ, էն սև օրից  
Լալկան դարձան աչերս...

Երնեկ ձեզի.—մի օր կրկին  
Ետ կը դառնաք շարքերով՝  
Մենակ-ղարիպ ես կը մնամ  
Հայրենիքիս կարօտով...

Զուլալ ալիքներ կուգան ու կերթան,  
կարմիր արևի ցուքերով քաշուած,  
Նազան ծփանքով պաղ համբոյր կուտան  
Մարմանդ ափերին՝ ծաղկունքով նշխուած,

Հէյ ջան ալիքներ, ես ձեզի մեռնիմ,  
Որ էդպէս շարքով ընկեր էք կամբայ.  
Ձեր էդ միաբան մրմունջին մեռնիմ,  
Որ հոգուս խորճկ ու զիւ ձէն կուտայ...

Հէյ ջան հալալ է, որ դուք կուլ կուտաք  
Ձեր դէմ ցցուողին ու կպարտկէք.  
Կտրիճի նման միշտ կուրծք դէմ կուտաք  
Դուշմանի զարկին ու կփշրտէք,

Արիք մենք էսպէս՝ ալիքների պէս,  
Մեր ճամբան էրթանք, իրար ձեռք բռնած.  
Արիք մենք էսպէս՝ ալիքների պէս,  
Միշտ կտրիճ մնանք դուշմանի դիմաց...



Թշուա՛ն ժողովուրդ... մոլեռանդ գերի՛  
Փռած, խարխլած, անյայտ ոյժերի՛  
Որ այնպէս թափով խոնարհուել զիրտես,  
Խաչ ու մասունքի զօրութեանն անտես,

Որ այնպէս յուսով կեանքիդ վրկութեան  
Գութ ես միշտ մուրում, մուրում յաւիտեան.  
Իեւ չզարթնեցիր դարևոր քնից,  
Յուսախափութեան մռայլ ցնորքից:

Դու այպէս խղճուկ, կեանքի շուկայում,  
Չեռքից ձեռք անցար լռիկ, անդադրում.  
Բանդ ու աքսորի դու տաժանակիր  
Եղար հարազատ, հլու որդեգիր:

Բայց հերիք անարգ, եսամոլ մարդիկ  
Շինեցին իրանց շահի խաղալիկ  
Քո ցաւն ու քո բախտ, թշուա՛ն մուրացկան.  
Միթէ՞ այդ կեանքը սիրում ես այդքան...

Էս իմ սիրտը՝ խենթ ու խելառ  
Գարուն կուզէ հով ու դով,  
Նախշուն ծաղիկ, ծէգ վարդավառ  
Մարն սմբուլ ծփանքով:

Կուզէ անվերջ թռչել օդում,  
Ծծել բոյրը ալ վարդի,  
Սուզուել յստակ ալիքներում,  
Լինել զետի հազ փերի:

Կուզէ էն սև տղի հոգուն  
Մըրիկ լինել անըսպառ,  
Սէր հուրհուրիլ, սիրել անհուն—  
Էս իմ սիրտը՝ խենթ-խելառ...

## ՄԻ ԳԻՇԵՐ.

Ես անյոյս մինչև լոյս նստեցի  
Լերկ ու մերկ ժայռերի գագաթին,  
Քեզ, Մանտաշ, սրտամաշ դիտեցի—  
Տեսայ քեզ ցաւակէզ, սև, մթին:

Մտածկոտ ու ծաղկոտ քո կրծքին  
Ծեր Մորփէն դալկադէմ կը շրջէր.  
Քո հոգուն՝ միշտ անքուն, ցաւագին,  
Զով քամին իր մեանին կը սուլէր:

Կարկամած Արագած վերեից,  
Ա՛խ, կուլար միալար ու տրտում,  
Իր բոլոր հին ու նոր ցաւերից  
Կ'ոլորէր սև ամպեր զենիտում:

Ես տեսայ ադամայ մութն իջաւ.  
Լուռ հանգան լուսնկան, ջինջ աստղեր  
Եւ կաթ-կաթ շաղակաթ ցողն իջաւ,  
Դողացին, տեղացին վառ շողեր:

Ես տեսայ ամպի պէս վեր ելան  
Անփրկանք տառապանք քո սրտից.  
Քեզ ժպտաց լուսաբաց վաղօրդեան  
Բոլորակ-արեգակ լեռներից:

Պճնուած, յոյս առած դու վստահ.  
Գգուեցիր լայն, անծիր եթերին.  
Ա՛խ, այդպէս, մանկան պէս կը ժպտայ  
Շղթայուած ու խափուած խեղճ գերին:

Ես երկա՛ր վշտահար նստեցի  
Լերկ ու մերկ ժայռերի գագաթին.  
Քեզ, Մանտաշ, սրտամաշ դիտեցի  
Խոկերով, մտքերով՝ սև, մթին...

---

## ԵՍ ԸՄԲՈՍՏԱԳԱՅ...

Ես ըմբոստացայ... խաւանքը լացեց  
Խիզախ բռունցքիս հարուածների տակ,  
Իզուր դաւադիր գիրկը նա ըացեց,  
Իզուր խոստացաւ լինել հպատակ...

Նա սիրել էր ինձ այնպէս խանդավառ  
Եւ բերել աշխարհ դժուար երկունքով.  
Աչերս կապած՝ բայց հոգիս կայտառ  
Գզուել էր անվերջ, սնուցել կրծքով:

Նա աղջամուղջոտ մռայլ գիշերից  
Ոչինչ չէր պահել ինձանից անտես,  
Կուրացած տենչով միշտ իմ թշերից  
Համբոյր էր քաղել գթառատ մօր պէս:

Ես ըմբոստացայ — լոյսը սիրեցի  
Եւ խելացնոր հարուածներին տակ  
Խաւանքը ընկան... ես... ես յաղթեցի  
Փնռք ու պատիւ ինձ, կեցցէ՛ յաղթանակ...

Ձեզ՝ որ ապրում էք խաւարին գերի՝  
Ես իմ ուղիով թողել եմ նշան—  
Բազում օղակներ իմ շղթաների՝  
Որ փշրուելիս ծաղկեցրին շուշան:

Դէհ, դուք էլ եկէ՛ք՝ եկէ՛ք լոյսի մօտ.  
Անէ՛ծք—ով չուզէ զատուել խաւարից.  
Ես այստեղ հասայ՝ ծագեց առաւօտ.  
Շուրջս լոյս, ազնտ... Փառք ու պատիւ ինձ...

Լոյսը բացուեց դողդոջեցին  
Ցող-շողեր,  
Վաղեց քամին դալար դաշտով  
Անտարբեր:  
Քնհատ ծաղիկն օրօրուելով  
Շնկշնկաց,  
Սարի լանջից ջինջ աղբիւրը  
Կլկլաց...  
Ի՞նչ պատահեց, թե՛ թաղեցին  
Լուռ դաշտում,  
Այն ի՞նչ թումբ է, ուր մարդիկ են  
Արտասուում...  
Հն՛... այդ նա է—ըմբոստ հոգին  
Քաջարի,  
Որ յանդգնեց էլ չմնալ  
Խեղճ, գերի...  
Հն՛... այդ նա է, որ իր մահով  
Վաղաժամ  
Ազատութեան դափնին խլեց  
Անթառամ...

Զնգան... հա, զնգան. գալարուիր, ճնշիր  
Որքան ոյժ ունիս.  
Սկացած, ժանգոտ, պաղ օղակներով  
Պինդ հպուիր մարմնիս,  
Քամիր արնաքամ իմ ձեռ ու ոտից  
Վերջին հիւթն իսպառ,  
Ծլատիր սմքած, չորացած կաշուց  
Ողջ կեցած պատառ...  
Մենակեաց կեանքիս երգերը տխուր  
Խեղդիր քո հեքով,  
Հիւանդ երազիս ցոլքը խափուսիկ  
Մարիր անէծքով...  
Զնգան... հա, զնգան զիշեր և ցերեկ  
Անխափ և անքուն  
Մեղսոտ բռնութեան որպէս արժանի  
Միակ փրկութիւն:  
Զնգան շարունակ, վրդովիր բանտիս  
Գիշերուան անդորր,  
Սև ժանգդ ներկիր վառ կարմիր գոյնով  
Արիւնէս ծոր-ծոր. .  
Ահն նոսրացաւ խոլ աղջամուղջի  
Անթափանց խաւար,  
Նորածին արփին կապեց երկնքում  
Լուսեղէն կամար...  
Դէհ, զնգան քիչ էլ. քո ստոր փառքին  
Մօտ է սև օրհաս՝  
Արթնացած կեանքի վես գիտակցութեան  
Վառ լոյսն է՝ անսաս:

Լսում ես դրսից ներդաշնակ կրգի  
Աղմուկն յաղթական,  
Նա է ցուցարար իմ ընկերներից՝  
Քո դատը մահուան:  
Շուտով կը պոռթկայ այն լոյս աշխարհում  
Ահռելի մի դէպք՝  
Եւ դո՛ւ, ս՛վ շղթայ, կը մնաս անտէր,  
Մոռացուած, անպէտք...  
Կամ թէ դարբնանոց կերթաս կոյտերով  
Կուռ սալի վրայ՝  
Կը փշրին հոգիդ և դու կը դառնաս՝  
Գործիք առօրեայ...  
Դէհ, զնգան ուժեղ, որքան ոյժ ունիս  
Պինդ հպուլիք մարմնիս—  
Վերջին ցնցումիդ տազնասալի թափից  
Թո՛ղ հրճուի՝ հոգիս...



Փանօք քաղմաշարչար, ստրուկ մարդկութեան՝

Տառապանքների, վշտի աղբիւրին.

Կեանքի՝ ճեղհեղում չարի խորտակման

Ահաւի կուռի մարտիրոսներին:

Փանօք զրկանքների մեծ անապատում

Խիզախ, աննուաճ մագլցողներին,

Քաղցից նուազած՝ հրապարակներում

Հացի և վրէժի երգ երգողներին:

Փանօք արախողխող ու գնատակահար

Քաջ ըմբոստների լուռ շիրմներին,

Մռայլ հանքերում ընկած շարէ-շար,

Սմբած, տրորուած սև դիակներին:

Փանօք թիկունքներին՝ ծռուած բեռի տակ.

Կոշտացած, ջլոտ ժիր բազուկներին:

Փանօք բանուորութեան միութեան օղակ-

Հպարտ փողփողող կարմիր դրօշին:

Փանօք ի բարձունս սուրբ ազատութեան

Նորածին ոգուն՝ տանջանքում ծնուած:

Միշտ փանօք և նրան, որ համայնութեան

Խաչն է փրկանքի ուսերին դրած...

Յ Ա Ն Կ.

	Էրես.
1. Ազատութեան զօղանջները . . . . .	3
2. Յառանջ անվեհեր . . . . .	4
3. Սև շղթաներ . . . . .	5
4. Մի հոգեհանգիստ . . . . .	6
5. Բլրուլին . . . . .	7
6. Բանւորները . . . . .	8
7. Կոյր երգիչը . . . . .	10
8. Ազատութեան մարտիկներին. . . . .	11
9. Տրտունջ . . . . .	12
10. Միջազգային երգ . . . . .	13
11. Կեանքի դասը . . . . .	14
12. Այնտեղ գնացէք . . . . .	15
13. Արծուի սէրը . . . . .	17
14. Բանւորի երգը . . . . .	18
15. Երկնքի յուշերից . . . . .	19
16. Երազ . . . . .	22
17. Յե՛տ տար քո խաչը . . . . .	23
18. Մենք էլ միանանք . . . . .	28
19. Արծիւը . . . . .	29
20. Փարուանայի գիշերներից . . . . .	31
21. Երջանիկը . . . . .	33
22. Գութանի երգը . . . . .	35
23. Գեղջկուհու մորմօքը. . . . .	37
24. Ինձ մի սիրիր . . . . .	38

	երես.
25. Ես ու նա . . . . .	40
26. Մի լար իմ սիրտ . . . . .	41
27. Հանգցրէք ջահերը . . . . .	42
28. Չկայ Ալադեադ . . . . .	45
29. Գարուն է . . . . .	46
30. Կը հիւսեմ երգեր . . . . .	47
31. Աշուն . . . . .	48
32. Առեղծուածը . . . . .	49
33. Անքուն գիշերից . . . . .	51
34. Տար ինձ մեծ հոսանք . . . . .	52
35. Աշնան երգերից . . . . .	54
36. Դօնի վրայ . . . . .	55
37. Թշուառ ժողովուրդ . . . . .	56
38. Էս իմ սիրտը . . . . .	57
39. Մի գիշեր . . . . .	58
40. Ես ըմբոստացայ . . . . .	60
41. Մեր օրերը . . . . .	61
42. Կալանաւորի երգը . . . . .	62
43. Փանք ի բարձունս . . . . .	64



№ 1 30 4.



Издание: Ростовъ н-Д.  
Торг. Д. Гельм-Оглуевъ  
и Шапошниковъ.  
Шушаникъ Кургинянь.